Ռաֆֆի

Խրատ հայ բանաստեղծին

Քո ազատախոս տաղերն անաչառ
Կըզրկեն հացից քե՛զ, խե՛ղճ բանաստեղծ,
Կըլինես աղքատ, կըմնաս թշվառ,
Քանի քո քնար հնչում է անկեղծ:

Կեղծավորաբար դու երգե գովեստ՝
Թե կամիս դու հաց՝ անգութ հարստին,
Շողոքորթության լա՛վ ուսիր արհեստ,
Եվ մի՛ ափսոսիր պատվիդ կորստին:

Կղերի առջևը դու խնկե կնդրուկ,
Ապրուստ շահելու թե ունես փափագ,
Որպես գետնաքարշ գերի, կամ ստրուկ,
Կուռքին մամոնի եղի՛ր երկրպագ:

Հայնժամ կըգտնես դու քեզ մեկենաս,
Որ աշխատությանցդ կըհարգե տաղանդ,
Մինչև գերեզման դու խեղճ կըմնաս,
Թե ճշմարտություն երգես ջերմեռանդ: